



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5388-5390







94<sup>62</sup>


a. 26.28.57

055

# ԳԻՏԱԿ

Այս

1894 Տարւոյ



ԳՐԵՑ

Գ. Կ. ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ




Կ. ՊՈՂԻՄ

Տպագր. Մարզական

—  
4382

ԳԻՏԱԿ

1891 ՏԱՐԻՈՅ



ՅՈՒՆՈՒԱՐ



1 – 8. Թունուար

Ամսամած օդ :

Բագոսեան ուխտին միաբանք  
Նոր Տարւոյ առթիւ փողոցներու  
մէջ հրապարակային ճգնութիւն-  
ներ կը կատարեն, մէկ պատէն  
միւսին կը զարնուին, գլուխնին  
կը պատռեն, տիղմերու մէջ կը  
թաւալին :

Ազգականք, բարեկամք եւ

այցեքարտք իրարու Նոր Տարի  
կը մաղթեն :

**9—17 Յունուար**

Օդը երեսը թթուեցուց :  
Կ'անձրեւէ :

Բժիշկ մը վարդապետ ձեռ-  
նադրուելով վանք մը կը քաշուի :

Ուրիշ բժիշկ մ'ալ տան միջ-  
նորդ կըլլայ :

**18 — 21 Յունուար**

Ճուրտն սկսաւ կծել :  
Կը ձիւնէ :

Ածխավաճառք անպատում ու-  
րախութեամբ ձեան գալուստը  
կողջունեն եւ ցնծութեան տօն  
կը կատարեն :

Աստուած շատ քաշել չը տայ :

**22 — 31 Յունուար**

Զիւնեղէն սլաստառով ծած-  
կուած է երկիրը, հիւսիւսային  
հողմը ուժգնութեամբ կը փչէ :

Քանի մը բժիշկներու նախա-  
ձեռնութեամբ յանձնաժողով մը  
կը կազմուի, տօնելու համար Քօր-  
սէն հնարողին յիսնամեայ յօ-  
րէլեանը :



## ՓԵՏՐՈՒԱՐ

•••••

### 1 — 8 Փետրուար

Ցուրտը կը շարունակէ, բայց  
ոչ ածխավաճառները գոհ ընելու  
աստիճան :

Լրագրասկետ մը կը մեռնի :

Հանգուցելոյն պաշտօնակից-  
ները վարպետ անդրիագործ մը կը  
փնտռեն, վրան փառաւոր շիրիմ  
մը կանգնել տալու համար :

### 8 — 15 Փետրուար

Ցուրտն զգալի կերպիւ մեղ-  
մացաւ :

Ածխավաճառ տեարց սրտին  
ճրագը մարեցաւ :

Նաւապետ մը նաւուն կտու-  
վարութիւնը ճամբան ղեկավարին  
յանձնելով՝ ինք ցամաք կելնէ,  
ղեկավարն ալ քիչ յետոյ նաւն  
անոր ետեւէն ցամաք կը հանէ :

Վարպետ կտաւագործ մը վար-  
ժարանի մը տեսուչ կը լլայ :

### 15 — 22 Փետրուար

Խառնակ օդ :

Ոլեկոծութիւն :

Նոր հարս մը էրկանը անունին  
ըս հաւնելուն համար կը ճգէ մօ-  
րը տունը կը փախչի :

Կը լսէք կնքահայրներ :

### 22 — 29 Փետրուար

Անձրեւաբեր հողմունք :

Կին մը տան մլուկներն ու

լուերը ջնջելու մաօք սլատշգամէն  
Մարտ կը նետէ . սափորը խեղձ  
գիւղացիի մը գանկը կը խորտակէ  
ուղեղը կը սլարսլէ :

Մեծատուն մը մեռէր է , թա-  
ղելու կը տանին նմանը քիչ տես-  
նուած մեծ հանդիսիւ :



## ՄԱՐՏ

---

### 1 – 9 Մարտ

Երկինքը գեղեցիկ է եւ գար-  
նանային արեւը զայն կը լուսա-  
ւորէ :

Եթէ փռնդտաք, չըլլայ եր-  
բէք Մարտը հանեցի ըսելով հա-  
գուստնիդ թեթեւցնէք :

Հարուստ մարդ մը ծանր հի-  
ւանդանալով կտակը կը պատրաս-  
տէ եւ երբոր կապաքինի շինած  
գտակը գլուխը կանցընէ :

Բարով վայելէ :

### 9 – 16 Մարտ

Ամպամած եւ ցուըտ :

Զիւն եւ փուք . . . :

Տեսէք ինչ'պէս կը մռնչէ ձմեռը  
օրհասական առիւծի մը նմտն,  
կարծես կը դժուարի գարնան  
տեղի տալու :

Տեղ մը սքանչելի հնութիւններ  
կը գտնուին :

Պառաւ կին մը գիշեր մը երա-  
զին մէջ հարսին գլխուն մազերը  
փետտելով, իրապէս վերմակն ու  
գլխուն բարձը կը բզքաէ :

## 16 — 22 Մարտ

Խառնակ Օդ :

Պճնասէր կին մը ոտքն իր բուն  
ծաւալին մէկ չորրորդը ցոյց տա-  
լու համար նեղ կոշիկ հագնելով՝  
մատերէն մէկուն վրայ կոշտ կը  
գոյացընէ :

Բժիշկներ կուգան, նախ կոշտը

կը կտրեն որ վէրք բացուի հօն ,  
յետոյ մատը կը կտրեն , հուսկ  
ապա ոտքը կը սղոցէն եւ գե-  
րեզման կուղարկեն :

**22 — 31 Մարտ**

Արեւը վճիռ երկնից վրայ կը  
փայլի եւ իր ջերմութիւնը կը  
տարածէ ամենուրեք :

Հրապարակագիր մը մէկդի կը  
նետէ գրիչը եւ ձեռք կ'առնէ բրիչը ,  
Փորձ վարժապետաց սովը տա-  
կաւ զգալի կը լինի :



## ԱՊՐԻԼ

---

### 1—8 Ապրիլ

Պարզ եւ ցուրտ :

Այսօր կարգ մը մարդիկ զիրար խարելու խարխըրելու համար զանազան հնարքներ կը խորհին եւ կը ջանան զիրար գերազանցել :

Մրցումն այս մասին այն աստիճան յառաջ կերթայ, որ շատ տեղ կատակը կոռուի կը փոխուի, գըլուխ կը պատռի :

### 9—14 Ապրիլ

Երկնից կամարը թուխ ամսլերով ծածկուած է, որուման ձայներ անձրեւ կաւետեն :

Մեծահոչակ բանաստեղծ մը  
ճոխ յանքեր գտնելու համար  
ճակատն այնքան կը շփէ որ կը  
մաշէ զայն :

Բժիշկ մը քօնսիւլթասիօնի մէջ  
խօսքին թելը կորսնցնելով, Ասկ-  
էպոսին կով մը զոհ կը մատու-  
ցանէ :

### 15 — 21 Ապրիլ

Ահա սպասուած անձրեւը :

Առեւտուրներուն վիճակը գո-  
հացուցիչ լինելէ հեռի չէ :

Վարսկետ ատամնաբոյժ մը մար-  
դու մը ցաւած ակռան հանելու  
մեծ ճարտարութեամբ ծնօտը  
տեղէն կը հանէ :

### 22 — 30 Ապրիլ

Պարզ եղանակ ,

կանայք մեծ փութով Մայիս  
ամսեան նորաձեւութեան կը  
պատրաստուին :

Մեծ վաճառական մը սնանկա-  
ցաւ :

Բժիշկ մը ծննդաբերութեան  
երկունց մէջ տառապող աղքատիկ  
կնոջ մը՝ կանխիկ տասն սսկի չա-  
ռած, այցելել չուզելուն համար  
փառաւոր ծեծ կուտէ :

Միաբերան ասասցուք « անուշ-  
ներ ըլլլայ » :



## ՄԱՅԻՍ

---

### 1 — 8 Մայիս

Ալորժելի աւուրք :

Գիւղագնացութեան Անհրաժեշտ  
հարկը շատ տուներու մէջ կռւոյ  
տեղի կռւտայ :

Շոգեկառք ըլլալէն ետքը ոս-  
քով քալելն ի՞նչ ըսել է :

### 8 — 14 Մայիս

Պարզ եւ ջերմ :

Հեռաւոր ծովու մը մէջ կղզի  
մը կը բարձրանայ, ուրիշ տեղ մ'ալ  
ծովը տեղի կռւտայ ցամաքին :

Ապահովագրական ընկերու-

թիւն մը սնանկութիւն կը հրա-  
տարակէ :

Գարեջուրի եւ օղիի տակառ-  
ներու մէջ խեղդուողներ կը գըտ-  
նուին :

### 15 — 20 Մայիս

Օդոց պայծառութեան խօսք  
չկայ բացի շնորհակալութենէ ,

Մեռած կարծուած կին մը ճամ-  
բան յարութիւն առնելով՝ կելնէ  
դադաղին մէջ կը նստի :

Այրն իմանալով այս բանը ,  
անմիսիթար կոխբայ կողակցին  
վերակենդանութիւնը :

### 21 — 28 — 31 Մայիս

Ախորժելի աւուրք:

Բանագող խմբագիր մը մեծա-

ծաւալթերթի մը երկար և քնաբեր յօդուածները ծայրէ ի ծայր կարդալու կը դատապարտուի :  
Կին մը հինգ աղջիկ զաւակ մէկէն կը ծնի :



26 28 - 57

## ՅՈՒՆԻՍ

---

**1 — 8 Յունիս**

**Պարզ Օդ :**

Պառաւ կին մը գիշեր ատեն շան  
մը ոռնալը լսելով, կը յանձնա-  
րարէ իւր մէկ աղջկան հողաթափ-  
ներն հակառակ կողմը դարձնել:

Նպարավաճառ մը մգլած նպա-  
րեղէնները յաճախորդի մը վաճա-  
ռած սլահուն օձիկը ձեռք կու-  
տայ եւ ծանր տուգանաց կը  
դատապարտուի ի վնաս իւր յա-  
ճախորդաց :

**9 — 12 Յունիս**

**Ախորժելի Օդ :**

Լուերն ու մլուկները գլուխ կը  
վերցնեն :

Կարգ մը կանայք գիւղագնա-  
ցութեան առթիւ էրիկներնուն  
Դէմ դրօշակ կը սլարզեն :

Կին մը գիշեր տտեն երկնակա-  
մարին վրայ փայլող լուսնին մօտ  
աստղ մը տեսնելով տունն ապա-  
հովագրել կուտայ :

## 13 — 19 Յունիո

Չերմ եւ սլարզ :

Երկու նաւապետ մրցման ելնե-  
լով, մին զմիւսը նաւովն հանդերձ  
ծովու յատակը կիջեցնէ :

Մանկամարդ կին մը կարտաքսէ  
առւնէն էրիկը որ չէր ուզէր  
էնթերի շաղվարը՝ Սերբի բանդա-  
լոնի փոխել :

**20 — 27 — 30 Յունիս**

*Օդը տաք է :*

*Շատ ամուսիններու մէջ սլա-  
ղութիւն կը տիրէ :*

*Կնաթողութիւններ աեղի կու-  
նենան :*

*Վարպետ սափրիչ մը մարդու  
մը մազերը կտրելու տեղ ականչ-  
ները կը կտրէ :*

*Առատութիւն սլտղոց, զգու-  
շացէք շատ ուտելէ, շատ խօսելէ :*



## ՅՈՒԼԻՍ

---

### 1 — 8 Թուլիս

Օդին տաքութիւնը միեւնոյնէ :  
Հիսոլոկրատի ուսումնաւարտ  
աշակերտ մը կը յայտարարէ ի-  
րեն գիմող հիւանդները խնամել  
եւ քիչ օրուան մէջ մեռցնել :

Ուրիշ նորընծայ բժիշկ մալ  
հիւանդ չեղողները գերեզման  
ուղարկելու մասնագիտութիւն  
ունենալը կը յայտարարէ :

### 8 — 12 Թուլիս

Տօթաքին եղանակ :  
Մեծահոչակ վաստարան մը  
հրապարակի վրայ վարկը կորսն-

ցնելուն ասպարէզէն կծիկը կը դնէ;  
հնակարկատ կը լլայ :

Ուրիշ նորընծայ փաստաբան  
մ'ալ իւր յուսացածին չափ գործ  
չըկրնալ տեսնելուն, սրտնեղու-  
թէնէն տակառ մը գինին փորը  
կը լեցնէ եւ քանի մը ժամէն  
պորտէն կը ճաթի :

**12 — 19 Յուլիս**

Պարզ եւ ջերմ:  
Ծովու բաղնեպանք ստակ դնե-  
լու տեղ չեն գտներ :  
Երկրաշարժի մի քան թեթեւ  
ցնցումներ զգալի կը լինին հե-  
ռաւոր քաղաքներու մէջ :

Կին մը գինով էրիկը տանը  
առջեւէն հեռացնել ուզելով կուժ  
մը ջուրը պատուհանէն գլուխն  
իվար կանցընէ :

**20 — 27 — 31 Յուլիս**

Ախորժելի աւուրք :

Ճարտարապետ մը չէնքի մը  
բարձրութէնէն վար կը գլորի ,  
դարեբաղդաբար կատուի պէս չորս  
ոտքի վրայ իյնալուն մէկ տեղը չի  
վկասուիր :

Անհամար դրամի տէր կծծի  
մարդ մը կը մեռնի անժառանդ :



## ՕԳՈՍՏՈՒ

### 1—9 Օգոստու

Պարզ եւ պայծառ :

Ծովու վրայ նաւային արկած-ներ տեղի կունենան, բարեբաղդաբար առանց մեծ վնասու եւ առանց մարդու կորստեան :

Նորընծայ խմբագիր մը ընթերցող չը գտնելուն եկած ճամբէն ետ կը դառնայ :

Կանխիկ վճարող բաժանորդները ետեւէն նայած կը մնան :

### 10—17 Օգոստու

Զովութիւնը տակաւ զգալի լինի, զգուշացէք առաւօտ եւ

Երեկոյ թեթեւ հագուստներով  
բաց օդեայ տեղեր շրջելէ :

Տեղ մը հանգային ջրոյ աղ-  
բիւր մը կը գտնուի :

Բժիշկները այդ ջրոյն օգտա-  
կարութիւնը կը հաստատեն :

Կանայք աշնան նորաձեւու-  
թեան կը պատրաստուին :

## 18 — 25 Օգոստ

Անձրեւաբեր հողմունք :

Երեկոյթի մէջ եօթանասուն  
գարուններ տեսնող մարդ մը ,  
մանկամարդ գեղուհւոյ մը սէր  
յայտնելու ոճիրը գործելուն հա-  
մար հրապարակաւ ալրը օգկա  
ըլլալու կը դատապարտուի :

Կեսուր մը յաջողելով վերջապէս  
հարսն էրկանը ծեծել տալ զգա-

ցած ուրախութէնէն խելքը կը  
թոցնէ :

**25 — 31 Օգոստու**

Կանձրեւէ :

Հարսանեաց հանդիսի մը մէջ  
դեռ զոյգ ամոլք զլուխ գլխի  
չը տուած փեսայն արդէն առած  
դրամ օժիտէն զատ 1000 ոսկեոյ  
համեստ գումար մը եւսկը պահան-  
ջէ աղջկան հօրմէն, հակառակ  
սլարագային փախուստ տալու  
սալառնալեօք :

Հարսին հայրը նամուս պեղասի  
ըսելով փեսայն կը գոհացընէ :



## ՍԵՊՏԵՄԲԵՐ

---

### 1 — 8 Սեպտեմբեր

Ախորժելի օդ :

Գեղջուկ մը իւր նախաճաշին  
սլանիրը գողցող ագռաւն յաջո-  
ղելով բռնել՝ ու վանդակի մը մէջ  
բանտել, իբրեւ քաջ որսորդ  
անտառը կերթայ առիւծ որսա-  
լու :

Մեծահարուստ մարդ մը, չա-  
փազանց փառասէր, իւր յուղար-  
կաւորութեան հանդէսն ի կեն-  
դանութեան կատարել կուտայ,  
այդ յետին փառքն եւս անձամբ  
վայելելու համար :

**9 — 11 Սեպտեմբեր**

Մուկեր մուտ գտած ըլլալով  
վարժարանի մը մէջ, հոգաբար-  
ձութիւնը կորոշէ որսորդ կատու  
մը վարժեցնել հոն :

Ածխավաճառք մեծ փութով  
իրենց մթերանոցները կը լեցընեն.  
բժիշկները դարտակ գրպաննին  
լեցնել կերազեն, կանայք աշնան  
նորաձեւութեան համեմատ հագ-  
ուած շքուած պտըտելու տեղ կը  
փնտուեն :

**11 — 32 Սեպտեմբեր**

Պարզ մերթ անձրեւ :

Նշանաւոր հեղինակ մը գիտա-  
կան յօդուածի մը մէջ իւր սափ-  
րիչին վայելուչ ձեւով մազ չկրնալ  
կտրելն կը պատմէ եւ կը խնդրէ

ընթերցողներէն որ իրեն ուրիշ մը  
ներկայացընեն :

**22—30 Սեպտեմբեր**

Մերթ անձրեւ մերթ արեւ :

Մուրացիկ մը բարեգործական  
հաստատութեան մը կարեւոր  
գումար մը կը նուիրէ :

Լրաթերթք սոյն նուիրատու-  
թեան նկատմամբ Զաքարէական  
լոռութիւն կը պահեն :

Կառախմբի մը մեքենավարը  
ճամբան առագաստ կը սլարզէ :

Պատկերահան մը խնդրոյ մը  
առթիւ իւր քեռայրը մենամար-  
տութեան կը հրաւիրէ :



## ՀՈԿՏԵՄԲԵՐ

---

**1—8 Հոկտեմբեր**

Պարզ եղանակ :

Թարգմանիչ մը իր չդիտցած  
լեզուէն խիստ հետաքրքրաշարժ  
վիպասանութիւն մը կ'սկսի թարգ-  
մանել :

Կանայք խիստ նեղ շրջադպես-  
ներ հագած ըլլալնուն համար չեն  
կրնար քալել :

Գիւղագնացութեան առթիւ  
սնանկացողներ կը գտնուին :

**9—16 Հոկտեմբեր**

Խառնակ օդ ,

Կանայք գլուխնին կտակ կը դնեն  
ըստ նորաձեւութեան :

Աղջիկտեսի սովորութիւնը բո-  
լորովին կը վերնայ :

Մարդ մը ձմրան համար քանի  
մը հազար օխայ ածուխ քնելով,  
մէջէն ելած քարովը քարուկիր  
պղտիկ տուն մը կը շինէ :

**17 — 23 Հոկտեմբեր**

Հողմունք եւ անձրեւ :

Չորս մեթր լայնութեամբ մէջք  
ունեցող օրիորդ մը իր մէջքը մէկ  
մէթր լայնութին ունեցող քօրսէի  
մէջ սղմեցնելու փորձ կը փորձէ եւ  
կը յաջողի :

Այս ամսուն վերջեր հով մը պի-  
տի ենէ, ուժքին հով մը, որ  
կանանց եւ օրիորդաց լայնեզր  
գլխարկները օդին մէջ պիտի

թռցնէ եւ մազենուն ձեւը պիտի  
աւրէ :

Վերջին նորաձեւութեան համե-  
մատ գլուխնին կըտակ դնող կա-  
նայք այս սլատուհասէն զերծ պիտի  
մնան :

**22 — 31 Հոկտեմբեր**

Խառնակ օդ :

Բժիշկ մը դեղագործի մը հետ  
կընկերանայ անոր անվաճառ դե-  
ղերը սպառելու համար :

Չափազանց շատակեր մարդ մը  
ուրիշ շատակեր մարդու մը հետ  
մրցման կելնէ :

Մրցումն հրասլարակաւ տեղի  
կունենայ :



## ՆՈՅԵՄԲԵՐ

### 1 — 8 Նոյեմբեր

Հողմային պարզութիւն :

Ծովաւ վրայ գտնուողները ցամաքի վրայ գանուողներուն երանի կուտան :

Մարդ մը կարգուած օրը, կընկանը հետ պայմանագրութիւն կը կնքէ, տարին 12 ամիս զայն պարահանդէս տանելու համար :

Տեարք հացագործք հացի նկանակներուն մէջ մէկ մէկ կտոր ածուխ կը դնեն :

### 8 — 16 Նոյեմբեր

Անձրեւարեր հողմունք :

Մսավաճառներուն մօտ երթա-

լու համար, վիճակահանութեան  
մը առաջին պարդեւը վաստկած  
ըլլալու է :

Հողմացոյցի հարկ չ'կայ ածխա-  
վաճառներուն նայեցէք, երեսնին  
ո՞ր կողմը դարձուցեր են, այն կող-  
մէն հովը կը փչէ :

## 16 — 21 Նոյեմբեր

Խառնակ օդ :

Նախանձոտ էրիկ մը, պարահան-  
դիսի մէջ իւր կնոջ ուրիշի մը հետ  
խօսիլը տեսնելով՝ կիյնայ կը մա-  
րի :

Հոն գտնուողները մարդասիրա-  
բար վրան քանի մը խովա ջուր կը  
թափեն, բայց խելքը գլուխը  
չի գար :

Մարդ բաղդին մէկ բարեյաջող  
բերմամբն հարստանալով բարեկա-  
մաց բարեւ տալը կը դադրեցնէ :

22 — 31 Նոյեմբեր

Օդը միշտ խառնակ է :

Ծառերը կմախք դարձան, ցուրտըն զգալի կը լինի :

Տուներու վրայ մէկ երկու պճեղ սխառը, քանի մը կապուտ ուլունք եւ հին հողաթափ մը կախելու սովորութիւնը հետզհետէ կընդհանրանայ :

Այս բանը ասլահովագրական ընկերութեանց մտահոգութիւն կը պատճառէ :



## ԴԵԿԱՄՈՒԹԵՐ

### 1 — 7 ԴԵԿԱՄՈՒԹԵՐ

Անձրեւ եւ հողմ:

Մարդ մը պարահանդիսի ծառաց դիմադրելու կարող ըլլալու համար, սուղաժան տունը կը ծախէ կնոջը խորհրդով:

Նշանաւոր գրագէտ մը վառարանին քով կծկտած քրօնիզներ կը պատրաստէ, կրթական հաստ կոճղեր կը կոտրաէ:

### 7 — 14 ԴԵԿԱՄՈՒԹԵՐ

Ցրտաշունչ հողմունք եւ ձիւն:

Ծեծուած խահվէ վաճառողները մէջը հարիւրին ութսուն լուրիա խառնելնուն համար, լուրիային գինը վրայ կը դնէ:

Քօրսէի ողբալի զոհեր կը գըտ-  
նուին :

Մայրեր , մայրեր , եթէ ձեր  
զաւակաց ծաղիկ հասակի մէջ  
թառամիլը չէք ուզեր , մէջքերնին  
քորսէով սեղմելու մի վարժեց-  
նէք :

Տէսէք սա խեղճ կինը , ինչպէս  
կողբայ , ինչպէս ձեռները գլխուն  
կը զարնէ , յուստհատ , ինկած մէկ  
հատիկ զաւկին անկենդան մարմ-  
նոյն վրայ զոր հալեցուցած է  
Քօրսէն :

## 14 — 21 Դեկտեմբեր

Զիւնախառն անձրեւ :

Գրագէտ երիտասարդ մը նոր  
տարւոյ առթիւ իր նշանածին  
շնորհաւորական նամակ մը գրելու  
համար հակ մը թուղթ կը գնէ :

Աստուած կարողութիւն տայ ,  
դիւրին բան չէ :

Թրաքօման վերցնել կուզեն,   
այս բանին տղջիկ զաւկի տէր մայ-  
րեր մասնաւոր դաշնադրութիւն  
մը կնքած են իրենց մէջ :

**22 — 31 ԳԵԼԻՏԵՄՔԵՐ**

Հողմունք եւ անձրեւ :

Մեծ եւ փոքր վաճառականք  
առ հասարակ գլուխ քերելու ժա-  
մանակ չունին, մեծ փութով  
հաշուեկշոնին կը պատրաստեն :

Մեծ քանակութեամբ մրգեղէն  
եւ շատ մը հին գրքեր կ'սպառին :


Հարուստ մարդ մը աղքատիկ  
տղայոց մէյմէկ ձեռք հագուստ  
կը շինէ :

Ապրին ասանկ ողորմած հա-  
րուստները :

Մնաք բարեաւ :

Տեսնուինք կրկին 1892 ին :

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ



Արշալոյսէն առաջ մարդուն մէ-  
կը դրացւոյն տունը կը զարնէ  
ըսելով։

— Բարեկամ, կըքնանամ կոր։

— Գործը գիտէ, կըսէ ներսէն  
դրացին, ի՞նչ կուզէս, ի՞նչ կուզէս։

— Տասը ֆրանք փոխ տայիր  
ինձի։

— Կըքնանամ կոր, բարեկամ  
կը սլատասխանէ մարդը ներսէն։



Դքսին մէկը օր մը վերսայլի  
մէջ հսկայ հասակաւ կին մը տես-  
նելով՝ քովիներուն հարցուց։

— Ո՞վ է այս կինը։

— Դիւղացի մ'է պատասխանեցին իրեն :

— Դիւղ մ'է ըսէք ըսաւ .  
դուքսը :

---


Ժողովի մը անդամներէն մինչ  
քնացած էր :

Նախագահը ձայներ հաւաքելու  
միջոցին սոյն անդամին ալ կար-  
ծիքը խնդրեցին , ասի աչերը  
շիելով « կախեն , կախեն » ալտ-  
տառխանեց : « բայց խօսքը խոտի  
վրայ է » ըսին իրեն . « անանկ է նէ  
հնձեն » ըսաւ եւ նորէն քնացաւ :

---

Կին մը օր մը իր էրկանը հե-  
տեւեալ նամակը կը գրէ : « Քեզ  
նամակ կը գրեմ՝ վասն զի ընելիք  
գործ մը չունիմ . եւ կը վերջացնեմ  
վասն զի ըսելիք խօսք չունիմ : »

Մանկամարդ կին մը իր ամուս-  
նոյն մահուանը վրայ լալով արտաս-  
ուած հեղեղներ կը թափէր : Երբ  
զինքը մխիթարել ուզեցին . — ոչ  
ըսաւ թող տուէք որ լամ կըր-  
ցածիս չափ . վասն զի միայն այս  
օր սիամի լամ, մէջ մ'ալ միտքս  
բնաւ գոլիք չունի :



Լուի ԺԵ. առտու մը պալա-  
տականի մը հարցուց թէ քանի՞ զա-  
ւակ ունէր :

— Չորս, տէր արքայ, պատաս-  
խանեց պալատականը :

Թագաւորը ցերեկն ալ երկու  
անդամ հետը խօսելու առիթ ու-  
նենալով՝ դարձեալ միեւնոյն հար-  
ցումն ըրաւ իրեն :

— Պարոն քանի՞ զաւակ ունիք :

— Չորս, տէր արքայ, ըսաւ  
պալատականը :

Վերջապէս իրիկունը խաղի ժամանակ երբ թագաւորը նորէն իրեն հարցուց :

— Պարոն քանի՞ զաւակ ունիք :

Այս անգամ պալատականը պատասխանեց, « վեց, Տէր արքոյ » :

— Ի՞նչ, ըստ թագաւորը, բայց կարծեմ առաջ չորս ըսած էիք :

— Շիտուկը, տէր արքայ, վախցայ որ եթէ միշտ միեւնոյն պատասխանը տամ կը բարկանաք :

---

Ազնուական մը օր մը շտա նեղը մնացած ըլլալով, սեղանաւորի մը կերթայ եւ կըսէ անոր :

« Պարոն, շատ պիտի զարմանաք, թէ ի՞նչսլէս՝ զձեզ ճանաչելու պատիւը չունենալովս հանդերձ՝

եկած եմ ձենէ խնդրելու որ 100  
ոսկի փոխ տաք ինծի :

— Դուք աւելի եւս պիտի զար-  
մանաք թէ ի՞նչպէս, զձեզ ճանչնա-  
լու պատիւը չունենալովս հանդերձ  
պահանջած գումարնիդ փոխ տամ  
ձեզ :

\* \* \*

Օր մը երբ ճարտասանութեան  
դասատու մը Դիւրէնի մահուան  
վրայ ատենախօսութիւն կըներ,  
աշակերտներէն մին շատ հաւնելով  
ըստ ընկերոջը :

— Պարոն՝, ե՞րբ դուք պիտի  
կարենաք տսանկ ճառ մը ըսել:

— Երբոր դուք ալ Դիւրէն մը  
ըլլաք, պատասխանեց միւսը :

\* \* \*

Կը հաւատաք, պարոն՝, կըսէր  
պղտիկ կին մը գինեմոլի մը, եթէ

ըսեմ որ աասը տարի է իվեր այրի  
եմ՝ բնաւ օր մը մտքէս անգամ  
անցած չէ կարգութլ:

— Կը հաւատա՞ք, տիկին, պա-  
տասխանեց գինեմոլը, եթէ ձեզի  
ըսեմ թէ՝ ինքզինքս գիտնալէս  
ի վեր է որ ծարաւ ըսուած բանը  
մտքէս անգամ անցած չէ:

\* \* \*

Զուարճախօս մարդ մը օր մը  
կորտի մը տուն ճաշելու գացած-  
ըլլալով, տան աէրը ճաշելէն ետքը  
խիստ պղտիկ շիշ մը ընտիր գինի  
հրամցուց՝ որուն աղէկութիւնը  
եւ մանաւանդ հնութիւնը միշտ  
կը գովիր:

— Բոէ՛նայիմ, ինչու՞ս կը գըտ-  
նաք իմ պղտիկ շիշս, ըստ, իրեն  
կորտը:

— Շիտակը, միլորդ, պատաս-

խանեց միւսը , տարիքին նայելով  
շատ պլատիկ է :

\* \* \*

Զօրապետ մը դերասանուհի մը  
կը յանդիմանէր շապիկի պէս  
շաբաթը անգամ մը սիրահար  
փոխելուն համար :

— Ինչ ընեմ , պարոն , ըստ  
դերասանուհին , արդի երիտա-  
սարդները սեխի կը նմանին , աղէ-  
կը գտնելու համար յիսուն հատը  
աչքէ անցնելու է :

\* \* \*

Ֆրանսուա Ա . ի գրապահը հըռ-  
չակաւորն Տիւվալ՝ ուսումնական  
ի՞նչ բան որ հարցուէր իրեն , շատ  
անգամ չեմ գիտեր կը պատաս-  
խանէր :

« Բայց՝ ըստ , օր մը իրեն՝ ոը-

գէտին մէկը, թագաւորը քեզի ա-  
նորհամար ամսական կուտայ որ  
գիտնաս :

Իմ գիտցածիս համար ամսական  
կուտայ ինձի պատասխանեց գիտ-  
նականը պարկեցտութեամբ . եթէ  
չգիտցածներուս համար տար,  
տէրութեան բոլոր գանձերն ալ  
չպիտի բաւէր :

\* \* \*

Ֆրանքօ-Գերմանական պատե-  
րազմին ժամանակ Բրուսիացի վի-  
րաբոյժ մը ֆրանսական դեղարան  
մը մտնելով տղրուկ կը փնտռէ ,  
եւ որովհետեւ տղրուկին Գաղ-  
ղիերէնը չէր գիտեր, սկարո՞ն, կըսէ  
ունիք արդեօք արիւն ծծող  
փոքրեկ սեւ կենդանիներէն :

— Հասկըցայ, կը պատասխանէ  
դեղավաճառը, լու է ձեր փնտը-  
ռածը, որմէ մեր քով չիկայ :

Մարդուն մէկը իր բարեկամ-  
ներէն մէկուն մեծ գումար մը փոխ  
տուած էր : Ասիկայ երկայն ատեն  
իր սլարտքը չը հատուցանելով  
կը նայէր որ որչափ կարելի է  
իրմէ փախչի : Բայց օր մը դէպքը  
անանկ բերաւ որ երկուքը դիմացէ  
դիմաց եկան : Փոխատուն մէկէն  
կեցիր ըսաւ ու ձեռքէն բռնեց  
ըսելով, շուտ՝ դարձուր ինծի  
ստակո եւ կամ բարեկամս :

\* \* \*

Աղքատ ուսանողին մէկը, որն  
որ շատ բաղձանք ունէր սրինդ  
սովորելու, վարպետի մը երթալով  
հարցուց թէ ամեն մէկ դասա-  
ռութեան համար ինչ՝ կը սլահան-  
ջէ :

Առջի ամսուան համար ըսաւ  
վարպետը, ՅՈ Գրանդ, իսկ երկ-  
րորդ ամսուան համար ՅՈ Գրանդ :

Լաւ է, լաւ, ըստ ուսանողս, թէ  
որ կը հաճիս՝ անմիջապէս եր-  
կրորդ ամսուան սկիզբը դասի  
սկսինք :

\* \* \*

Տէր մը ծառան կանչելով ըստ  
իրեն. աս ինչ<sup>o</sup> է, բերած ձեռնո-  
ցիդ երկուքն ալ աջ ձեռքի են,  
աս չի յարմարիր : Ծառան գնաց  
եկաւ ու ըստ, Տէ՛ր, մէկալ եր-  
կուքն ալ չեն յարմարիր, վասնզի  
անոնց երկուքն ալ ձախ ձեռքի  
են,

\* \* \*

Ագահ մը աղքատի մը աւելցած  
կերակրոյ կտոր մը տուաւ . աղքա-  
տը նոյնը առաւ ու հոն սեղանին  
վրայ եղած լրագիր մը քաշեց  
հետը առաւ որպէս զի տուածը  
մէջը փաթթէ : Ի՞նչ կ'ընես պօռաց  
ագահը, դեռ չեմ կարդացած :

Բան չիսյ ըստւ աղքատը, երբոր  
դուն մէկու մը բան մը կուտաս,  
Արագրի մէջ դնելու բան է :

\* \* \*

Զուարձալի ընկերութեան մը  
մէջ խնդիր ծագեցաւ թէ ինչո՞ւ  
համար կանայք մօրուք չունին:  
Ասոր մեկնութիւնը դիւրին է,  
ըստւ մէկը, ո՞վ պիտի զիրենք  
ածիլէր, որովհետեւ բերաննին  
րոպէ մանգամ հանդարտ չեն  
կրնար բռնել:

\* \* \*

Վարժապետ մը աշակերտին  
կըսէր, Սա՛րգիս, միտ դիր՝ թէ  
որ հարցաքննութեան ատեն  
վերատեսուջը քեզի հարցնելու  
ըլլայ թէ՝ զքեզ ո՞վ ստեղծեց,  
պատասխան պիտի տաս թէ Աստ-

ուած։ Բայց հարցաքննութեան  
ատեն վերատեսուչը սխալմամբ  
ուրիշ աշակերտի մը ըրաւ նոյն  
հարցումը՝ ու ըսաւ, զքեզ ով  
ստեղծեց։ իմմայրս, պատասխա-  
նեց ալզտիկը։ ի՞նչ, ըսաւ վերա-  
տեսուչը, Աստուած՝ չ'ստեղծեց  
զքեզ։ Զիս չէ, հապա անիկայ  
ստեղծեց, ըսաւ ալզտիկը՝ Սար-  
դիսը ցուցնելով։

\* \* \*

Հարուստ Զինաստանցի մը լսելով  
որ եւրոպացիք՝ բժիշկներուն  
հիւանդանալու ատեննին ստակ  
կուտան, ըսաւ, անշուշտ ձեր  
մէջը շատ հիւանդ ալիտի գտնուի  
եւ երկայն ատեն հիւանդացող-  
ներ շատ ալիտի ըլլան։ Ես չորս  
բժիշկ ունիմ, որոնց շաբաթական  
կապած եմ, բայց հիւանդացած  
օրէս ստակնին կը կտրեմ՝ մինչեւ

որ նորէն առողջանամ. կարծեմ  
ասիկայ աւելի խելացի ընթացք  
մընէ :

\* \* \*

Միմոսին մէկը պանդոկ մը եկաւ  
ու ճաշելու ատեն պանդոկապետը  
մօտենալով ընկերութիւն ընել  
ուզեց եւ ուրիշ խօսակցութեանց  
մէջ սկսաւ նաեւ իր տանը մինե-  
րուն շատութեան ու աներե-  
սութեանը վրայ տրտնջալ : Շատ  
գէշ, շատ գէշ, ըսաւ միմոսը,  
դժբաղդութիւն, ինչ սկիտի ընես.  
բայց ես դեղ մը ճար մը գիտեմ  
զիրենք հալածելու, վերջէն կըսեմ  
քեզի, թէ միտքս ձգելու չմոռնաս :  
Միմոսը պանդոկէն երթալու որ  
եղաւ՝ պանդոկապետը երկայն  
բարակ ու սոսկալի հաշիւ մը  
դրաւ առջեւը, միմոսը զարհուրիլ  
մը ցցուց, բայց հանեց ստակը

տուաւ ու Երթալու վրայ էր՝ մէյ  
մալպանդոկապետին միտքն ինկաւ  
անոր խոստացած մկներու դեղը  
ու խնդրեց որ նոյնը զուրցէ։ Աս  
ինձի բերած հաշիւդ ցուցուր  
իրենց, ըստ միմոսը, եւ քեզի  
կը խոստանամ որ ամենքն ալ  
անմիջապէս կը փախչին կերթան։

\* \* \*

Վարպետին մէկը իր սիրելի  
աշակերտաներէն մէկը ուզեց ճաշի  
հրաւիրել. բայց աշկերտը տունը  
չգտնելով՝ դրան վրայ ասանկ  
գրեց. այսօր իմ քովս ճաշի հըր-  
աւիրուած ես։ Աշկերտը տուն  
գալով ու դրան վրայ դրուածը  
կարդալով դնաց վարպետին քով  
ու մէկտեղ ճաշեցին։ Երկրորդ օրը  
աշկերտը դարձեալ ճաշի եկաւ.  
վարպետը զարմանալով հարցուց  
Ո՞վ զքեզ այսօր ճաշի հրամցուց։


Դուն, ըստ աշկերտը, որովհետեւ  
այսօր ալ տուն դարձած ատենս  
դրան վրայ քու հրաւէրքդ կար-  
դացի: Վարպետը ծիծաղեցաւ ու  
անմիջասլէս անոր դրան վրայի  
քրածը աւրել տուաւ:

\* \* \*

Մարդուն մէկը ընկերութեան  
մը մէջ հաստատելու կը ջանար  
որ երկիրը կլոր չէ, ապա թէ ոչ  
կըսէր, քալելու ատեն միօրինակ  
վեր ելլելու եւ կամ վար իջնալու  
վրայ պիտի ըլլայինք: Այս, այն-  
ուէս է, հայր, ըստ պզտիկ աղ-  
ջիկը՝ խօսքին մէջ նետուելով.  
Երէի մօրս հետ հասակի վրայ  
խօսելու ատեննիդ մեր առջեւը  
կը տրտնջայիք՝ որ դուք միշտ  
իջնալու վրայ էք ու կըսէիք որ  
մենք երիտասարդներս միշտ  
ելնելու վրայ ենք:

## ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Գարուն եւ հասարակաց . ի դեկտ . 8  
Ամառ եւ արեւադարձ . ի սեպ . 11  
Աշուն եւ հասարակաց . ի յունիս 9  
Զմեռ եւ արեւադարձ . ի մարտի 9



## ԱՄՍԱՄՈՒՏՔ ՎԱՐՉԱԿԱԼԱՑ .

Յունվար Փետր . 15

Փետրվար մարտ 31

Մարտ իման Փետրվար .

Ապրիլ , Մայիս 31

Մալիս , Յունիս 50

Յունիս , Փոյթ մ'ըներ երեւ չունիս .

Յուլիս , Օգոստոս 25


Օգոստոս Սկսեմլեր . 50

Յեպտեմբեր , կեցիր՝ քող զայ հոկտեմբեր ,

Հոկտեմբեր մ'աճապարեր ,

Նոյեմբեր՝ հաշիւդ բեր ,

Դեկտեմբեր , առնելիք սալիք չէ  
մնացած :



Թ Ա Տ Ո Ւ Յ Ա Շ Ա Ր Ա Բ Ա Շ Ո Ւ Յ Ա

## ՆԵՐՍԷՍ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Ակորեան խան, թիւ 8, 9, 10, 11,

**Տպագրութիւն ամէն տեսակ  
զրեանց , Հայերէն , Թուրքերէն ,  
Ֆրանսերէն , Յունարէն , Առևսերէն  
եւ Պուլիարէրէն լեզուա:**

### ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ

**Տպագրութիւն ամէն լեզուաւ .  
Այցետումս , Նամակազլուխ , հարսա-  
նեկան եւ այլ հրաւիրագիր , վկայա-  
գիր , հաշուեցոյց , զանազան տոմսակ ,  
վանառականական եւ այլ տըաբերա-  
կանի , գեղատիպ եւ պատկերազարդ  
տպագրութիւնիք եւ այլն եւ այլն չա-  
փաւոր գիներով :**

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս  
Ք Ա. Ր Դ Տ Ը Վ Հ Զ Ի Թ

Ա Պ Յ Բ Ի Ֆ Ա Կ Ա Տ Ա Վ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն


Ա Մ Ե Ն Լ Ե Զ Ո Ւ Ս Ի

Հ ա ր ի ւ ր (100) հ ա մ ը ս ա մ ը (10) դ ր ու ց

Ն Ր Ա Բ Ա Ն Դ Ա Կ Վ Ի Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք Զ Ա Փ Ա Խ Ո Ր Գ Ի Ն Ե Ր Ո Վ

## ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ

ՀՅԱՏԱԲԱԿԵԱԼ Ի Վ. Յ. ՄԱՐԴԱՐԵԱՆԵ



ՔԵՐԱԿՈՆ ԻՌ.Մ ՄԱՆԿԱՆՑ ԳԻՐՔԸ .  
— Բողոքովին նոր ռանդ. 80 ի չափ  
փոքրադիր պատկերներով զարդար-  
ուած , Այս մանկանց տուղին  
գիրքը , գերազանցած է իւր նման-  
ները եւ փորձով հաստատուած  
է թէ՝ ասկիցլաւ եւ խիստ գիւրու-  
սոյց քերական մը՝ ցարդ չէ  
հրատարակուած . գինը չափա-  
զանց աժան , հատը 10 փարայ ,  
100 ը՝ 15 դրուչ :

ՍԻՐՈՒՆ ԶԲՈՍԱՐՈՆ . մանկանց  
երկրորդ գիրքը , 65 մեծ եւ փոքր  
պատկերներով զարդարուած , սոյն  
ընթերցանութեան գիրքը կը  
պարունակէ մանկական երգեր ,

կարճ հատուածներ , առակներ ,  
բարոյալից փոքրիկ սլատմութիւն-  
ներ եւ առածներ : Դ . տպագ-  
րութիւն , գին 2 դրուշ :

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿ ՀԱՅ ՏՂԱՅՈՑ .  
Երրորդ գիրք ընթերցանութեան ,  
երկրորդ տպագրութիւն ձոխաց-  
եալ եւ 120 սլատկերօք զարդար-  
եալ կը բովանդակէ բարոյական  
գեղեցիկ սլատմութիւններ , ո-  
տանաւորներ , երգեր , առակներ ,  
ամենակարեւոր գիտելիքներ եւ  
այլն : Սոյն գիրքն գնահատուած-  
է ծանօթ մանկավարժներէ եւ մի  
տարւոյ մէջ արժանացած է կրկին  
տպագրութեան , արժանի իւր  
անուան եւ պիտանի ամեն հայ  
լուց :

ՄՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ , բազմա-  
պատկեր , Ե . տպագրութիւն :  
Սոյն դասագիրքը կ'աւանդէ հին

եւ նոր կտակարանի պատմութիւնը  
ըստ կարի ամիսով եւ դիւրու-  
սաննելի եւ համաձայն վարդապե-  
տութեան Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյ :

Ցարդ հրատարակեալ համա-  
ռօտ Ա . Գրոց պատմութեան  
հետ բաղդատելով, պիտի գտնեն  
աւելի դասական եւ դինն խիստ  
աժան՝ 100 ֆարայ :

ՀԱՄԱՐՈԾ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ կամ  
ԲԱՆԱԼԻ ԳՐՈՑ ԼԵԶՈՒԻ Եւ ՇԱՐԱ-  
ԴՐՈՒԹԵԱՆ . Ճոխ բացատրութեամբ  
եւ գործնական հրահանգներով  
կուսուցանէ Հայ լեզուն այնպիսի  
դիւրըմբոննելի եղանակաւ որ  
ցարդ չէ հրատարակուած : Գինն  
և զրուշ (հրատարակելի) :

ԳԵՂԵՑԻԿ ԱԾԽԱԲՀ . Դ . գիրք  
ընթերցանութեան . Ուկեմատե-  
նիկի լրացուցիչ մտսն է այնպիսի

շահեկան բովանդակութեամբ որ  
ամեն հայ տղայ պարտի կարդալ:  
(հրատարակելի):

ՖՐԱՆՍԵԲԵԿՆ ԼԵԶՈՒ. Ա. Տարի,  
երկասիրեաց Մ.Պ. Խորթում-  
ճեան, ահա գործ մը որ սլէտք  
չը թողուր այլ եւս ուրիշ որ եւէ  
դասագրքի, կարդալ գրել եւ  
խօսիլ սովորելու համար: Գինն 4  
լրուշ:

Ա.Ո.ՈՂՋԱԲ.Ա.ԿԱ.Ն ԵՒ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ, առանց  
զործի, արանց կանանց և տղայոց  
համար. 45 պատկերով, սոյն  
մարմնամարզութիւնը պիտանի է  
ազգային վարժարանաց եւ մանա-  
ւանդ փոքր տղոց որոց զնասակար  
են մարմնամարզական գործիքնե-  
րով փորձեր ընել: Եւ անոնց  
որք կուզեն իրենց կուրծքի և գլխի  
ցաւն փարատել՝ շնչառութիւնը

զօրացնել, նեղ կուրծքի տախտակը  
լայնցնել, նոր սկսած փշտկալից  
թռքախտութիւնը եւ շնչարգելու-  
թիւնը ու ասոր նման հիւանդու-  
թիւնները փարատել, կուրծքի  
եւ մէջքի գործարանները զօրա-  
ցնել, մարսողութիւնը զօրացնել  
շնչերակային արեան դանդաղու-  
թիւն, թռւլութիւն, որովայնի  
ստէպ պնդութեան գիշերավոր-  
ձութեան առաջքն առնել, թանչքի  
եւ արիւնային բնական հոսման եւ  
անդամալուծութեան մասին օդ-  
տակար խրատներ եւ դարմաններ  
ըսելը կարդացէք այս գիրքը եւ  
ճշդիւ հետեւեցէք դերմանացի  
բժիշկի խորհուրդներուն։ գինն է  
5 դրուշ։

Մարգարեան գրատան գր  
ըու ցուցակները կը դրկուին

## ԶԵԿՈՒՑՈՒՄ

Թղթատարով կարելի է յդել  
ամեն Տեսակ գիրք Կրօնա-  
կան , Դասական , Պատմա-  
կան եւ այլն , եթէ արժեզինք  
թղթատարի ծախսից կանխառ  
յլուին :

Թղթատարի ծախս կառ-  
նուի 10 դրուչի գրեթին 2 դրւ :

